

սարսնանքներուն վրայ ալ, իրապէս ազդեցութիւն ունեցաւ: Բայց — ինչպէս մենք համոզուած ենք — աւելի անխոհաւորութեամբ եւ արտօրնօք՝ քան շարութեամբ ու վրեժխնդրութեամբ ըրին աս բանս, մեր դրացի եղիսարեթուպոսեցւոց դէմ, որոնց հետ մեր պայքարը՝ ինչպէս նաեւ մենք, մինչեւ այս տխրալի դէպքը, միշտ, ամէնէն մեծ համակամութեան ու միաբանութեան մէջ էինք — խաղաղութեամբ ու հանգստեամբ կ'ապրէինք: Պատահած անկարգութիւններէն անմիջապէս ետքը՝ հոս տեղի պաշտօնական անձինք, որոնք այս տեսակ գործառնութիւններէն բոլորովին ազատ էին՝ աշխատեցան կողոպտուած ստացուածքը ժողովելու եւ զանոնք իրենց օրինաւոր տիրոջ դարձնելու: Սակայն աս փրշտակուած իրերը՝ քովէ քով բերելը՝ մինչեւ ցայսօր երկարեցաւ: — Ան ներքին համոզմամբ, որ ստացուածքն երբեք ուշ չի հասնիր իր տեղը՝ կը համարձակի ստորեւ գրեալ պաշտօնատունն, ամէն՝ աս տեղ գտնուած ու եղիսարեթուպոսեցւոց վերաբերած առարկաները, տեղւոյս նոտարին հսկողութեանը տակ, ըստ պարտականութեան մեծարգոյ քաղաքաբաշխութեանդ հասցնելու: — Աղաչելով որ պատահաները՝ կոյրցած եղեւնագործներուն մեծաննութեամբ շնորհելու բարեհաճի:

Ենք ամենայն յարգանքօր, Մեծարգոյ Քաղաքաբաշխութեանդ

Այլաշէրգէ, 1849 մարտ. 31.

խնարհ ծառաներ.

էջովն՝ Վարդապետ Զան. յ. յ.

Վեդիգ Ըսէր. յ. յ.

Սիւսյէլ Ըսէր. յ. յ.

Վեդիգ Վարդապետ. յ. յ. նոտար.

(Ըստնախնդր.)

ՅՈՎԱ. ԱՆՆՈՅ



Կ Ե Ն Ս Ա Գ Ր Ա Վ Ա Ն

ԲԻԺԻԿ ԴՈՎՏ. ՆԱՀԱԳԵՏ ԲՈՐՍԻՆԵՆՈՆ

(Ըստնախնդր.)

1860 Մայիս 24ի երեքշաբթին Կ. Պոլսոյ Հայ Ազգութեան համար ինքզնիք առաւօտ մը կը ծագէր. «Հայկազն Զարեհը»-նիստեղ Դէլ ոսկեղն Կոստանով Եղանկաւորն առիճի օր էլ՝ ինչպէս գրած է այն ատեն Մոսկովն:

Ռուսինեանի ամենէն ուրախ օրն եղաւ այն օրը, յորում՝ Նիկողոս Պալեանի հետ երկար տարիներէ ի վեր երկնած ազգաշէն փեմ խորհուրդն իրականութիւն կ'ունենար, եւ Յ. Արշնիկեանի, Գր. Օսեանի ու Սերգիւնի հետ ծրագրած ու խմբագրած Ազգային Կանոնադրութիւնն, իբր ղօնալի յոմնալի Ժեյնիստեղ, գոյուութիւն կ'առնուր վերջապէս: Ազգին բոլոր գործերը՝ կրօնական, կրթական եւ քաղաքական, ալ Ազգ. Սահմանադրութեան գծած օրէնքներուն համաձայն պիտի ընթանային. ածիրայական խարդաւանքի ու քամահաճոյքի խաղաղիկ պիտի չըլլային անոնք, այլ պիտի կարգադրուէին ժողովուրդին մեծամասնութեան ձայնովը, ըստ բանին՝ թէ, 2-յն Բողոք յայն Երաւունք, զոր արգէն Սահմանադրութեան հեղինակ եղողներն իրենց նուիրական սկզբունք ըսած էին:

Գովա. Ռուսինեանի ամենէն հպարտ օրն էր այն օրը, յորում ինքը, աղու մը պէս խնդաւրով, մերթ Սերգիւնի ձեռքը կը համբուրէ եղբի, մերթ Գր. Օսեանի, Ազգութեան կամ Բարունակի երեսները, շմուռնալով նաեւ թափել իր դառն արցունքն իւր վաղամեծիկ մօտերմէն, իւր անզուգական գաղափարակցին՝ Նիկողոս Պալեանի անմոռաց յիշատակին համար, ինչպէս կը պատմեն այսօր ժամանակակից ծերունիներ: Բայց հազիւ թէ բախտ կ'ունենար Ռուսինեան ծափահարելու 1860 Մայիս 24ի աղագային այս մեծ եղելութիւնը, հազիւ թէ կ'ողջունէր նա ծնունդն Ազգ. Սահմանադրութեան, եւ ահա ամիս մը լանցած կը ստիպէր զգիւնանկէ, հեռանալով Կ. Պոլսէն:

Այն ժամանակներն էր՝ որ լիբանանու մէջ Մահմետական եւ Քրիստոնեայ ժողովուրդներուն միջեւ կը ծագէին մեծ շփոթութիւններ, տխուր եւ սոսկալի անկարգութիւններ, որուն քստմեղի գոյժն երբ արձագանք կ'ունենայ Կ. Պոլսի, Օսմանեան բարեգութ եւ հպատակասէր կայսրն Սուլթան Մեհմետ Կալիպի կը տրամի, այնչափ կը յուզուի, որ անմիջապէս Պէյրութ կը ղրկէ իւր Արաքսին գործօց նախարարը՝ Ֆուատ փաշան, ինչոքոր իշխանութիւն տալով անոր, պատժել յանցաւորները խաղի, առանց կրօնի խտրութեան, անմեղները տէր ընել իրենց իրաւունքին եւ ջնջել խռովութիւնները:

Ֆուատ փաշան, հանրածանօթն իր անկողնակալ ու անաչառ արդարատարութեամբն, որուն ապացոյցը առեւած էր արդէն շատ անգամ, մանաւանդ՝ 1854ի Հելլենական ապստամբու-

1 «Մոսկովն», 9րդ տարի, Թի. 433 եւ. 26 Մայիս 1860:

Թեան ժամանակ, ամենէն յարմարն էր արդարեւ այս շատ փափուկ պաշտօնին: Ճամբայ կ'ենէր նա 1860 Յուլիսին, եւ Ռուսիեան¹ իրրեւ անոր անձնական բժշկիւր, կը պարտաւորէր փաստել մէկնիւ² թողլով ամսամարար ամէն ինչ: Ազգ, Ազգային Սահմանադրութիւն, ընտանիք եւ Սպարապետի Հիւանդանոց:

Ֆուստ փաշայի կ'ընկերանար նաեւ Ապրո Սահակ էֆէնտին, պետական այս խոհական չայը, 1852ի Նոյեմբ Աշուէ թերթին խմբագիրներէն,³ որ Ռուսիեանսի Հետ լիբանանու տխուր անջքերուն խաղաղութեան գործին մէջ շատ կարեւոր դեր մ'ունեցած է:

Ֆուստ փաշա Տերութեան Թայֆ անուն շորհնաւովը կը մեկնէր, Հետը ունենալով 600 զինուորէ բաղկացեալ ընտիր բանակ մը, որուն բժշկականն էր չայ մը, Գոկտ. Գարրիէլ էֆէնտի Սեւեան,⁴ այսօր փաշա եւ ամենէն երէցը թուրքիւ չայ բժիշկներուն:

Պէյրութ Հասնելով Ֆուստ փաշա շուտով կը յարողն ծագած խռովութիւնները կ'սեղնել. կը պաշարէ մոլեռանդ Հրոսաֆները, եւ յաւերթական օրհնութիւններու արժանի անաչառութեամբ⁵ կը դատէ զանոնք խտուր, բռնել կու տայ պարագլուխներն եւ հրապարակաւ կ'ստացան Հասնել կու տայ զանոնք, ինչպէս կ'աւանդեն մեզ այն ատենեան ազգային եւ օտար բոլոր թերթիները:⁶

Ըստ չանցած պաշտօն կու տայ Ռուսիեանսի,⁷ որոշել այն Քրիստոնեաները, որոնք խռովութեան ժամանակ մահուանէ ազատ ըլլալու համար, առ ճշի Մահաւանութեան էին յարած եւ զանոնք դարձեալ իրենց մայրենի կրօնին գիրիւ վերադարձընէ: Ռուսիեանսի իր այս պաշտօնը կը կատարէ շատ փափկանկատութեամբ ի մեծ գոհունակութիւն Օսմանեան կառավարութեան եւ յանպատու բերկրութիւն տառապեալ քրիստոնեաներու:

Քիչ մը վերը, Ռուսիեանսի⁸ Ապրո Սահակ էֆէնտիի Հետ անգամ կը կարգուի Լիբանանու տխուր անջքերուն քննութեանս համար Ֆուստ փաշայի կողմանէ որոշուած նշանաւոր

Յանձնախումբին¹ որ ինչպէս կը կարգաւոր այսօր պատմութեան մէջ, Ֆուստ փաշայի անխտրական արդարապարտութեան շնորհիւ² եղաւ չայը կատարելաւ խաղաղութեան եւ մայր ազատութեան Լիբանանու, որուն առաջին կառավարիւն ալ ինչպէս գիտենք, եղաւ չայ մը, մեծանունն Կարապետ Տափուտ փաշան:³

Մինչ Ռուսիեանսի Պէյրութի եւ Լիբանանի մէջ կը գործէր այսպէս Ֆուստ փաշայի հրամանին տակ, ասդին⁴ Կ. Պոլսոյ մէջ իր բացակայութեանը, Բարունակ Պէյի, Սիմն Միւքայէրեանի, Նշան Օտեանի, Պէհզատ Ուսուտի եւ ուրիշներու Հետ կ'ընտրուէր անգամ Սահմանադրական առաջին եւ երկրորդ Ուսուտական խորհուրդին,⁵ որ 1853ի պատմական Ուսուտական խորհուրդին ոչ նուազ գործունեայ, ոչ նուազ նշանաւոր հանդիսացած է յետոյ:

Ռուսիեանսի շարունակ Ֆուստ փաշայի Հետ կը մնայ, եւ միջոց մը երբ խռովութիւններն ալ Հանդարտած, խաղաղութիւնը վերահաստատուած էր, օգուտ ըտողնով աւիթիւն կ'երթայ այցելել չայախիլիկիւն եւ Ախլարու, ուրկէ դարձին կը շարագրէ իւր «Սէֆէ»⁶, անուն այն սիրուն երգը՝ զոր դեռ այսօր ամէն չայ շուրթեր կ'երգեն խանդավառ:

Վիլիկիոյ մէջ ամիս մ'աւելի մնալէ յետոյ դարձեալ կը դառնայ Ֆուստ փաշայի բով, մինչեւ որ այս մեծագործ փաշան, նորընտիր կայսր Սուլթան Աֆիւր օրով, Մեծ Եպարքոս անուանուելով կու գայ Կ. Պոլիս:⁷

1861 Գեփտեմբերին է, տարի ու կէս բացակայութենէ յետոյ, որ Ռուսիեանսի կը վերադառնայ Կ. Պոլիս,⁸ եւ ալ ինքզինքը բոլորովին կը նուիրէ ազգային կենսիքին, որուն մէջ ունեցած է միշտ շատ կարեւոր գործունեութիւն Սերվիէնի, Գր. Ալաթոնի, Բարունակ Պէյի, Ստեփան Ալանեանի եւ ուրիշներու Հետ:

Ռուսիեանսի վերադարձին, զժբախտաբար, շատ գէշ վիճակի մը մէջ կը գտնէ Ազգ. Սահմանադրութիւնը, որ տակաւին միամայ եւ աւելի մանուկ մը, դեռ հազիւ գայթիկ էր պայթ քայլեր առնել սկսած, նուիրական սկզբունքը:

¹ «Մուսթաֆա» 9րդ տարի, Թիւ 439, 7 Յուլիս 1860:
² «Մուսթաֆա» 49րդ տարի, Թիւ 33, 12 Օգոստոս 1800, էջ 520—522:
³ «Մուսթաֆա» 9րդ տարի, Թիւ 439, էջ 7, Յուլիս 1860:
⁴ «Հանդէս» Ախլարի Վիստիւր-Քիւստի-Քիւստի Քիւստի Փաշայի. Թիւ 60, էջ 1899:
⁵ «Մուսթաֆա» 9րդ տարի, բոլոր թիւերը Յուլիս, Օգոստոս եւ Սեպտեմբեր ամիսներու:
⁶ «Մուսթաֆա» 9րդ տարի, Թիւ 446, 25 Օգոստոս 1860:

¹ «Մուսթաֆա» 9րդ տարի, Թիւ 461, 8 Գեփտեմբեր 1860:
² «Սէֆէ» չայը Հաւաթի, Թիւ 403, 17 Յուլիս 1861, եւ «Մուսթաֆա» նոյն ամիսն 1861:
³ «Մուսթաֆա», 9րդ տարի, Թիւ 458, 17 Նոյեմբ, 1860, եւ 10րդ տարի, Թիւ 492, 12 Յուլիս 1861:
⁴ «Մուսթաֆա», 10րդ տարի, Թիւ 514, 13 Գեփտեմբեր 1861:
⁵ «Սէֆէ» չայը Ախլարի, Թիւ 664, 16 Գեփտեմբեր 1861:
⁶ «Սէֆէ»:

ներու վրայ հիմնուած եւ սուրբ նպատակի համար շինուած Սահմանադրութիւնը, եղած էր անշո, անձնական վէճերու, խտուելի կոխներու զազեր խառնարան մը, որուն համար դառնապէս կու լայ Ռուսիենան:

Երուսաղէմի Յովհաննէս Պատրիարքին մահուամբ, յարդրին ընտրութեան համար մեծ խնդիր մը ծագած էր Ազգին մէջ. Ազգային երեսփոխանութեան մեծ մասը, պարագային ունենալով իրեն Սերովիէն էֆէնտին, որ այն տարին անձամբ այցելած էր՝ Երուսաղէմի Ս. Յակոբեանց վանքը, եւ հոն տիրող անկարգութիւններն աչքովը տեսած եւ զննած, կ'ուզէր որ Սահմանադրութեան համաձայն երեսփոխանութեան թուէով ընտրուէր Երուսաղէմի պատրիարքը, եւ որովհետեւ Միաբանութեան մէջ այն Աթոռին արժանաւոր մէկը չկար, կ'ուզէր Միաբանութեան դուրս եկեղեցական մը որոշել: Երուսաղէմի Միաբանութիւնը եւ անոր կուսակցի քանի մ'եկեղեցականներ, ինչպէս նաեւ ամիրաներու խել մը անձնք, կը բողբէին այս որոշման դէմ, եւ իշխելով միշտ Հաննէ վարդապետին նզովքը, որ Երուսաղէմի պատրիարքական Աթոռը կ'արգիլէր Միաբան չեղողին, կ'ուզէին որ Միաբանութիւնը իսկ ընտրէր իր մէջէն իր պատրիարքը: Ալէճերը ապքած էին, երկպառակութիւններ ծնած էին, Ազգը բաժնուած էին Սահմանադրականներու եւ չկաստահմանադրականներու, կամ լատաւոր եւ իտաւոր խումբերու: Սարգիս պատրիարք իբրեւ հակասահմանադրական գահնկէց եղած էր, Սահմանադրութիւնը տակնուվրայ եղած վտանգուած էր՝ սոսկալի կոխներ ու ծեծեր տեղի ունեցած էին Ազգին մէջ, անկարգութիւնն այն աստիճանի հասեր էր, որ կառավարութիւնը միջամտած էր եւ տիրող խառնակութիւններուն վերջ մը տալու համար՝ դադրեցուցած էր Ազգ. Սահմանադրութիւնը, միանգամայն փափաք յայտնելով, որ Տէրութեան եւ Ազգին կողմանէ որոշուած խառն Յանձնաժողով մը քննէ ու սրբադէմ նախ այն Սահմանադրութիւնը, եւ Տէրութեան կողմէն վաւերացուելէ վերջը տուի այն գործադրութեան:¹

Հանդէպ այս տխուր կացութեան Բնչպէս չար Ռուսիենանի պէս մէկը, Բնչպէս չարմոքեր անոր սիրտը, որ այնչափ ուժգին բարախած էր միշտ Ազգ. Սահմանադրութեան համար:

1862 Փետրուար 20ին կը գումարուի Ազգային ընդհանուր ժողով մը, նախագահութեամբ Տեղապահ Ստեփանոս Մարաքեան Աթոռեպետի պատմին եւ Ատենապետութեամբ Գովհար Սերովիէնի,² որ Տէրութեան կամքը յայտնելով, այն նիստին մէջ ընտրել կու տայ Սահմանադրական վերաքննիչ Յանձնաժողով մը:

Այն Յանձնաժողովը կը բաղկացնէին Ստեփան Ալաւան, Գր. Օտեան, Աղաթոն Մկրտիչ, Մինասեան Մինաս, Սուրենեան Յովհաննէս, Մանուկեան Մանուկ եւ Նաեւ Գովհար Նահապետ Ռուսիենան:³

Ազգին կողմանէ ընտրուած այս Յանձնաժողովէն զատ՝ Տէրութիւնն ալ իր կողմէն կ'որոշէ Յանձնաժողով մը, բաղկացեալ բարձրաստիճան եկեղեցականներէ եւ երեւելի Ազգայիններէ, որոնք առաջններուն եւ Տէրութեան պաշտօնեայ քապուղի էֆէնտիի հետ միանալով՝ անմիջապէս գործի կը ձեռնարկեն ու կը սկսին Սահմանադրութեան վերաքննութիւնը:

Սահմանադրութեան այս նոր խմբագրութեան մէջն ալ գործնալ Ռուսիենան Նահապետ աշխատութեան ամենէն լայն բաժինը կ'ունենայ, ինչպէս կը պատմէր հանգուցեալ Ստեփան Փաշա Ալաւեան:

Ռուսիենան իւր բոլոր զգալունքները մէկդի կը թողու. իր բոլոր ժամերը մի միայն Ազգային կանոնադրութեան վերաքննութեան կը նուիրէ, որով Յանձնաժողովները կարող կ'ըլլան իրենց պաշտօնը կարճ ժամանակի մը մէջ աւարտել, եւ 1862 Ապրիլին վերաքննեալ Սահմանադրութիւնն յանձնել Տէրութեան:⁴

Սահմանադրական վերաքննիչ Յանձնաժողովին աշխատակցութիւնն աւարտելէն յետոյ, Ռուսիենան կը մասնակցի «Հայ Եւթուրոյական Ընկերութեան», որ կը հաստատուէր Կ. Պոլսոյ մէջ նոյն տարան Մայիսին, եւ որուն Հիմնադիր Ժողովին անդամ՝ կ'ըլլար ինքը Գրիգոր Աղաթոնի, Գրիգոր Օտեանի, Յովհար Բեռլէեանի, Մարտիրոս Միւհհէնտիսեանի եւ ուրիշներու հետ:⁵ Այս

¹ «Մատի», Թիւ 461, 1 Յունուար 1861 եւ Թիւ 465, ԳԸ. 4, Եւնուար 1861:

² «Արշալոյս» Արարոյթան, 2 Գովհար 22-րդ տարի, Թիւ 657, 658, 659 Սեպտ. եւ Հոկտ. 1861 եւ «Արշալոյս» Թիւ 3, Ապր. 30-էն (բացում 1860—1870 տարի) Կ. Պոլսի 8-րդ Մարտի 1890, էջ 34—35—80:

³ «Մատի», 10-րդ տարի, Թիւ 506, 16 Հոկտ. 1861:

⁴ «Մատի», 11-րդ տարի, Թիւ 524, 24 Փետր. 1862: «Արշալոյս» Թիւ 3, Ապր. 1862, (բացում 1860—1870 տարի) Կ. Պոլսի 8-րդ Մարտի 1890, էջ 81—83:

⁵ «Արշալոյս» Արարոյթան, 2 Գովհար 22-րդ տարի, Թիւ 672, Ապր. 1862:

⁶ «Մատի», 11-րդ տարի, Թիւ 534, 25 Մարտի 1862:

ընկերութեան նպատակն էր Ազգային երգեր, թատերական նուագներ ու պարերէն չմտադրուել, երաժշտութեան ճաշակը ծաւալել բոլոր Հայերուն մէջ,¹ եւ այն ատենան քեզ չայտնի անուն Հանդէսը կանոնաւոր եւ բարեկարգ փճակի մը մէջ պահել, Այս նպատակին համար՝ ընկերութիւնը կը կարգէր երգերու քննիչ Յանձնաժողով մը, կազմուած Թորոս Նազարեան, Մատթէոս Մամուրեան, Մկրտիչ Պէշեմթաշեան, Յակոբ Ոսկանեան, Սրապիոն Հէքիմեան, Ստեփան Փափազեան ուսումնական ծանօթ գրիչներէն,² որոնց գործառնութիւնը թէեւ շատ տեւական չ'ըլլար, բայց գիտնէ՞ր որ կարճ միջոցի մը մէջ Հայ քնարն ու Հայ բանաստեղծութիւնը կ'օժտէ ընտիր երգերով ու քաղցր նուագներով, որոնց մէջ Ռուսինեանի մէկ երկու երգերն ալ կ'երգուին զեռ «Եղբայր եմ Կո», «Ի բէր յայն», «Դու գեղեցիկ մանկի չէիք», եւ այն անմահ երգերուն հետ:

Եւ կը պատմուի թէ Ռուսինեան իր բանաստեղծական հանձնարոյն եւ իր զրբական գործերով, շատ մեծ զարկ մը պիտի տար այս երաժշտական ընկերութեան, իթէ զբաղած չ'ըլլար Ազգային Սահմանադրութեամբ, որուն՝ ոչ միայն երկիցս խմբագիրը կ'ըլլայ, այլ եւ անոր վերջին վաւերացումին ալ գրեթէ յաջողցնողը:

Որչափ որ Սահմանադրական վերաքննիչ Յանձնաժողովն իր գործը փութով կ'աւարտէ, սակայն՝ պետական վաւերացումը կ'ուշանայ, Ազգն առանց Սահմանադրութեան կը կառավարուի առժամանակեայ խառն ժողովով մը, եւ այս վիճակը կը տեւէ մինչեւ 1862 Օգոստոս, որ ատեն ժողովուրդն ալ անհամբերելով, որ մը խմբովին կը խուժէ Ազգ. Գաղութարարական եւ կը պահանջէ Ազգ. Սահմանադրութիւնը,³ Տեղապահ Մաղաքեան Սրբազան եւ խառն ժողովն Ատենապետ Դոկտ. Բարունակ պէյ կը հրաժարին, կառավարութիւնը չ'ընդունար ատենական իրենց պաշտօնը կը վարեն անկերպարան վիճակի մը մէջ, մինչեւ որ Սերվիլէնի, մանաւանդ Ռուսինեանի եւ քիչ մ'ալ Բարունակ պէյի միջնորդութեամբ, մեծ Նպարքոս Գուստ փաշան կը շնորհէ վերջապէս ազգին

իր վաւերացեալ Սահմանադրութիւնը,⁴ որ բեկբեկ նաւի մը պէս կ'ընթանայ այն օրէն ի վեր:

1863 Մարտ 22ին է,⁵ չիշխ Ազգային առաջին կանոնադրութեան հաստատուած (1857 Մարտ 21) օրը, որ Ազգ. Սահմանադրութիւնը կը վերածնէր. Ռուսինեանի ուրախութեան օյն էր դարձեալ այդ օրը, ինչպէս նաեւ բոլոր իր բարեկամներուն, որոնք ապահով էին թէ մէտեւական պիտի ըլլար Ազգ. Սահմանադրութեան գործադրութիւնը, քանի որ հովանի տէրութեան վաւերականութեամբն հրապարակ կ'ըլլէր այն, թէեւ տարբեր առաջինէն, բայց պահելով անոր հիմնական սկզբունքները:

Ռուսինեանի համար գործունէութեան ամենալայն ապարեզ մը ահա կը բացուէր. նոյն տարւան Սեպտեմբերին կ'ընտրուէր Ազգ. Երեսփոխան Մայր եկեղեցւոյ թաղէն,⁶ եւ Հոկտեմբերի 12ին ալ Բ. Ատենապետ Ազգային ընդհանուր ժողովին,⁷ Առաջին Ատենապետն էր՝ Դոկտ. Սերվիլէն Էֆենտին:

Եւ այսուհետեւ ու ահա, որ Ռուսինեան կը սկսի իր ամենապառ ծախսատարութիւնը Ազգ. Սահմանադրութեան Երեսփոխանական ժողովին մէջ, յուզելով հոն շատ կարեւոր հարցեր, հեղինակ հանդիսանալով կարեւոր ձեռնարկներու, որոնք պատմութեան մէջ ժառանգած են արդէն կարեւոր էջեր, եւ որոնք՝ կը յօրինեն Ռուսինեանի կենսական վերջին եւ ամենակարեւոր մասը:

(Ըրբանդիւն)

Թ. Յ. Վ. Ե.

ԱՅ Գ Ա Գ Ր Ա Վ Ա Ն

ՀԱՅ ԺԱՅՈՒՐԻՍԿԱՆ ԳԻՒՅԱԶՆԵՐԸ ՎԵՊԷ

Փ Ո Ք Ի Մ Հ Ի Ր

(Ըրբանդիւն)

Դաւթին եղաւ մի որդի՝ Մհերը:

Սորա մանկութիւնը նոյնպիսի դիւցազնական կատակներով և զարդարւած, ինչպէս Զոհրաբինը Պարսից, Վասիլի Բուսլայեւինը՝ Ռուսաց վէպերում. ում ականջից է քարշում՝ ականքն է հանում, թեւից է քարշում՝ թեւը պոկում. Ստաունի մեծամեծները գանգատում են

¹ «Մատեն», եւ ուրիշ թերթիք Կ. Պոլսոյ, 1863 Մարտ անի:

² «Մատեն», 12րդ տարի, Թիւ 580, 23 Մարտ 1863:

³ «Մատեն», 12րդ տարի, Թիւ 605, 14 Սեպտ. 1863:

⁴ «Մատեն»-ի մէջ Ազգային Ժողովի 1860-1870 տարի, Կ. Պոլսոյ, ապ. Սարգեան 1890, էջ 100-101 եւ «Մատեն», 12րդ տարի, Թիւ 611, 26 Հոկտ. 1863:

¹ «Ազգ.»

² «Ազգ.»

³ «Մատեն», 11րդ տարի, Թիւ 547, 7 Օգոստոս 1862:

⁴ «Մատեն», 11րդ տարի, Թիւ 552, 11 Սեպտ. 1862: